

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ



**ՆՈՐԻԵԳԱՅԻ ԲԱՐԵՐԱՐ
ՖՐԻՏԵՕՖ ՆԱՆՍԵՆԸ**

**ՅԵՂԱՍԴԱՆՈՒԹԵԱՆ
ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ
ԳԵՐՄԱՆԱՅԻ ԱՐՄԻՆ
ԹԷՕՖԻԼ ՎԵԳՆԵՐԸ**

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2** **Տիգրան Սուքիասեանի նորանոր յաջողութիւնները**
- 3** **Հայաստան՝ Աժ քնտրութիւններ**
Նաիրա Դայրումեան
Սուրէն Մուսայէլեան
- 5** **Սալեհ Եասին. Սիրահայի հայերին ոչինչ չի սպառնում**
- 12** **Թաւրիզի թեմական դպրոցի պատմութիւնից Աշոտ Մուրադխանեան**
- 16** **Շամլուի բանաստեղծութիւնը երկու թարգմանութեամբ**
- 18** **Նրանք գոյները չեն գանազանում**
- 20** **Ի՞նչ է ձգողական ուժը**
Արման Տ. Ստեփանեան
- 24** **Մարգանք**
Արման Տէր Ստեփանեան

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկշաբաթաթերթ

Ե սարի, քիւ119, Ապրիլ 4, 2012,
1200 քուման
Հայաստանում 320 դրամ



- 8** **Հայ ժողովրդի բարեկամները**
- 8** **Նորեգացի բարերար Տրիտեօֆ Նանսենը**
- 10** **Պերմանացի լուսանկարիչ Արմին Վեզները**

Պ ա Ր Ա կ ե Ր Է Ն ք ա ժ ի Ն

- | | | | | | |
|----------|---|-----------|---|-----------|---|
| 2 | Այս համարի հայերեն էջերում | | առեւտրական ազատ գոտի | | քնտրութիւնները Արփի Մանուկեան |
| 4 | Տատս ասում է իր պատմութիւնը բոլոր աշխարհին պատմեմ Լուսնի բոլոր ձեւերի ներքոյ | 8 | Հայաստանի բնակչութիւնը՝ անհանգստացնող թւեր | 14 | Կարօ Տէրտրեան Յովիկ Սինասեան |
| | Լէոնարդօ Ալիան | 9 | Թիֆլիսի Ռաֆայէլ՝ Յակոբ Յովնաթանեանը | 15 | 4 բանաստեղծութիւն Զօրայր Միրզայեան |
| 6 | Հայաստանում | 12 | «Պայման»-ի նոր համրից՝ Ատրպատականի հայերը եւ Մեջլիսի վեցերորդ շրջանի | | |

<p>Յոյս</p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտօնատէր՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմէն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայէլեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմէն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարգական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hooyes@inbox.com www.hooyes.com</p>
---	---	---	--


ԽՄԲԱՎԱՐ ՏԻԳՐԱՆ ՍՈՒՔԻԱՏԵԱՆԻ ՆՈՐԱՆՈՐ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Իրանահայ երաժշտագետ եւ խմբավար Տիգրան Սուքիասեանը վերջերս հանդէս է եկել նորանոր յաջողութիւններով: Նրա ղեկավարութեամբ «Սամին» իրանական երգչախումբը վերջին «Ֆաջր» երաժշտական փառատօնում հանդէս եկաւ «Վահդաթ» դահլիճում, որի համար էլ արժանացաւ մեծ գնահատանքի: «Սամին»-ը մասնակցել է նաեւ «Շամսէ» երաժշտական փառատօնին, որի

համար եւս գնահատագիր է ստացել: «Շամսէ» երգչախմբին ընկերակցում է դաշնակահար Ռուբէն Արզումանեանը:


Տիգրան Սուքիասեանի ղեկավարած «Սամին» երգչախումբը կազմել է 2005 թականին՝ նոյնաճանաչ երաժշտական դպրոցի աշակերտներից: Երգչախումբը կատարում է դասական եւ ժողովրդական գործեր: Խմբում դատիարակել են բարձր որակի մենակատարներ:

Տիգրան Սուքիասեանը՝ որպէս «Կոմիտաս» երգչախմբի ղեկավար, արժանացել է ՀՀ սփիւռքի նախարարութեան գրաւոր գնահատանքին: Նա պարգևատրուել է ՀՀ մշակոյթի նախարարութեան Ոսկէ Սեղալով՝ «հայ երաժշտութեան զարգացման եւ տարածման



գործում ունեցած նշանակալի ավանդի համար»:

Սիրելի արւեստագէտին մաղթում ենք նորանոր նւաճումներ:



ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ 2012

ԱՐԴԻԱԿԱՆ Է ԴԱՐՁԵԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԹԵՄԱՆ

Նաիրա Հայրունեան

Հայաստանում խորհրդարանական ընտրությունների նախաշեմին արդիական է դարձել տնտեսական թեման, ընդ որում ոչ միայն ընդդիմադիր կուսակցությունները, այլև կոալիցիոն «Բարգաւաճ Հայաստանը» քննադատում են կառավարութեան տնտեսական քաղաքականությունը՝ անւանելով այն ծախողւած:

Մասնաւորապէս ցաւոտ է համարւում ներդրումների հարցը. անցած մի քանի տարիներին Հայաստանում փակւել են ներդրումային ծրագրերը, մասնաւորապէս, «ուճաճւած շինարարութեան» ոլորտում, սակայն դրանց փոխարէն ոչ մի նոր բան չի յայտնւել: Նախկին արտգործնախարարի, իսկ ներկայումս ԲՀԿ-ի ընտրացուցակում երկրորդ հորիզոնականում գտնուող Վարդան Օսկանեանի խօսքով՝ «վերջին չորս տարիների ընթացքում մենք ոչ միայն դոփել ենք տեղում, այլև մի շարք ուղղութիւններով յետընթաց ենք ապրել»: Նախագահ եւ իշխող կուսակցութեան առաջնորդ Սերժ Սարգսեանն, ըստ էութեան, արդարացնում է տնտեսական քաղաքականութիւնը համաշխարհային ճգնաժամով՝ յայտարարելով, որ Հայաստանին յաջողւել է դիմանալ, քանի որ բոլոր միջոցները ուղղւում էին բանկերի եւ ֆինանսական համակարգի փրկութեանը: Նա չի ժխտում, որ հնարաւոր էր աւելի արդիւնաւէտ գործել, սակայն ասում է, որ կարող էր աւելի վատ էլ լինել: «Ժառանգութիւն» կու-



սակցութեան նախագահ Րաֆֆի Յովհաննիսեանը խոստանում է 1,5 մլրդ դոլարի ներդրումներ ապահովել: «Սպասւում է Մեծ վերադարձ դեպի Հայաստան, որի շնորհիւ 5 տարւայ ընթացքում Հայաստանից մեկնողների ու վերադարձողների հաշւեկշիռը կը դառնայ դրական՝ տարեկան միջինը 100 հազար մարդ», - ասել է Յովհաննիսեանը՝ յաւելելով, որ դա կախւած է կառավարութեան ներդրումներ գրաւելու հնարաւորութիւնից: Անգէն աչքով Հայաստանում չեն երեւում ոչ միայն հէնց ներդրումները, այլև դրանց համար պայմանները, սակայն, ըստ տնտեսագէտների, ներդրումներին խոչընդոտում է ոչ այնքան այն, որ Հայաստանն աշխարհագրական առումով ռիսկային գօտի է, այլ այն, որ տնտեսութիւնը մենաշնորհային է, բացակայում է պետութեան կողմից ներդրումների

պաշտպանութիւնը: Վերջին մի քանի տարիներին Հայաստանում մի քանի դատաւարութիւններ են եղել՝ կապւած սփւռքահայ ներդրողների հետ: Մասնաւորապէս, կարելի է մշել ամերիկահայ բարերար եւ գործարար Նարեկ Յարթունեանի գործը, որին կալանքի տակ էին վերցրել հարկերից խուսափելու համար: Սակայն, ինչպէս պարզւեց, պատճառը Երեւանի ժամացոյցի գործարանի բաժնետոմսերն են, որոնք Յարթունեանից ուզում է խլել տեղի պաշտօնեաներից մէկը: Վիճակագրութիւնը հաստատում է, որ օտարերկրեայ ներդրումները Հայաստանի տնտեսութիւնում 2011 թ. կազմել են 1,65 մլրդ դոլար եւ նախորդ տարւայ համեմատութեամբ աճել են 6,3%-ով: Թէեւ աւելի քան 800 մլն դոլար են կազմել ուղղակի ներդրումները, այսինքն՝ դրամական փոխանցումները: Ընդ որում, այլ երկրներում հայաստա-

նեան ընկերութիւնների կողմից արած ներդրումները կազմել են 115,8 մլն դոլար, աճը՝ 22,4%: Այսինքն՝ նոյնիսկ տեղացի ներդրողներն են դուրս բերում կապիտալը: Ամենախոշոր ներդրողը շարունակում է մնալ Ռուսաստանը, որին բաժին է ընկնում անուղ-

ղակի ներդրումների կեսից ավելին՝ 338 մլն դոլար: Ֆրանսիան երկրորդ տեղում է՝ 100 մլն դոլար ցուցանիշով: ԱՄՆ-ը առաջին անգամ յայտնել է երրորդ խոշոր ներդրողի դիրքում՝ 43,8 մլն դոլար, նախորդ տարւայ համեմատ գրանցել է աճ 2,7 անգամ:

ԱՄՆ-ին յաջորդում է Կանադան՝ 31,7 մլն դոլար (22,1% աճ): Գերմանիան գրեթէ կիսով չափ կրճատել է ներդրումների ծաւալը եւ յայտնել հինգերորդ տեղում՝ 24,5 մլն դոլար ցուցանիշով:

ՔԱՐՈՉԱՐՇԱԸ ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹԵԱՄԲ

Սուրբն Սուսայէեան

Ութ կուսակցութիւններին եւ մէկ նախընտրական դաշինքին ներկայացնող կարճ տեսահոլովակներն ու տեսանիւթերը կը շարունակեն ցուցադրել Զանրային հեռուստատեսութեամբ ամէն օր՝ 18:00-ից սկսած, մինչեւ Մայիսի 4-ը ներառեալ՝ ընտրապայքարի մասնակիցներին տրամադրող անվճար եթերաժամի մասին օրէնսդրական համապատասխան դրոյթին համապատասխան: (Քաղաքական ուժերը կարող են օգտւել նաեւ վճարովի եթերաժամի հնարաւորութիւնից՝ իրենց խօսքն ընտրողներին հասցնելու համար:) Անցած օրերի տեսանիւթերը գրեթէ ոչնչով չէին տարբերում հինգ տարի առաջ ներկայացուած քաղաքական գովազդից: Տեսանիւթերից մէկում Զանրապետական կուսակցութեան առաջնորդ Սերժ Սարգսեանը երեւանում հանրահաւաքի ժամանակ, կրկնում է կուսակցութեան կարգախօսը՝ «Զաւատանք, որ փոխենք»: Նա խոստացել է մի քանի տարւայ ընթացքում Զայաստանում ապահովել ազատութիւնների «լրիւ ուրիշ» մակարդակ իւրաքանչիւր քաղաքացու համար: «Զաւատացած եմ, որ ունենալու ենք լրիւ ուրիշ մակարդակի արդարութիւն», - հաւաքածներից մի կին տեսախցիկի առաջ կրկնում է գործող նախագահի խօսքը: Իշխանութեան ներկայացուցիչներ, գործարարներ, մարզիկներ եւ այլ յայտնի մարդիկ իրենց աջակցութիւնն են յայտնել Զանրապետական կուսակցութեա-

նը: Մինչ այդ մեծահարուստ Գագիկ Ծառուկեանը մէկ այլ հանրահաւաքում կոչ է անում քւէարկել իր իշխանամէտ կուսակցութեան՝ «Բարգաւաճ Զայաստան»-ի օգտին՝ հնարաւորութիւն տալով ընտրութիւններից յետոյ լրիւ այլ կառավարութիւն ձեւաւորել: Իշխանական կոալիցիայի միւս անդամի՝ «Օրինաց երկիր» կուսակցութեան ներկայացուցիչները պնդում են, որ իրենց անցած ուղին, այդ թւում՝ ներկայիս ԱԺ-ում օրէնսդրական գործունէութիւնը, իրենց դարձնում է կրկին խորհրդարան մտնելու ուժեղ յաւակնորդ: Լեւոն Տէր-Պետրոսեանն ու Զայազային կոնգրես ընդդիմադիր դաշինքի միւս կարկառուն դէմքերը ժողովրդին յորդորում են արտագաղթը դադարեցնելու եւ Զայաստանը փրկելու համար «առաջնորդել խղճով», երբ քւէախցիկում լինեն, նոյնիսկ եթէ դրան են

վերցրել, եւ նրանց սպառնացել են իշխանութիւնները: «Ձեզնից պահանջում է քւէարկելիս առաջնորդել միայն սեփական խղճով», - ասում է նա: Նման ուղերձներ են հնչել նաեւ Դաշնակցութեան կողմից, որի առաջնորդը մարդկանց յորդորում է չկաշառել եւ չընտրել «հաստավիզներին» խորհրդարանում: Իսկ «Ժառանգութեան» առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը «Ժառանգութեան» /«Ազատ դեմոկրատների» քարոզարշաւի օրհներգը ներկայացնող տեսահոլովակում (յայտնի երգիչներ Ռուբէն Զախվերդեանի եւ Յարութ Փամբուկչեանի կատարմամբ) ժողովրդի հետ խօսում է նաեւ պարի լեզուով: «Գալիս ենք նոր Զայաստան՝ միասին սարեր շրջելու», - ընդգծում է ընդդիմադիր առաջնորդը:

Աղբիւր՝ armenianow.com



ԵԱՍԻՆ ՍԱԼԵՀ. «ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԵՐԻՆ ՈՉԻՆՉ ՉԻ ՄՊԱՌՆՈՒՄ» **Մեդիամաքսի բացառիկ հարցազրույցը սիրիական ընդդիմության** **առաջնորդներից մեկի հետ**

Եասին Ալ Չաջ Սալեհը սիրիացի գրող, հրապարակախօս եւ այլախոս է: Գրում է Սիրիային եւ արաբական աշխարհին վերաբերող թեմաներով: 1980 թ-ին՝ 19 տարեկան հասակում բանտարկւել է ընդդիմադիր կոմունիստական կուսակցութեան անդամ լինելու համար ու 16 տարի անցկացրել Թադմուր բանտում:

Այժմ ապրում է Դամասկոսում, սատարում է սիրիական ընդդիմութեանը: Այդ երկրում զարգացումների շուրջ նրա յօդածները հրապարակւում են The New York Times-ը, Լիբանանի The Daily Star-ը, մերձավոր արեւելեան Jadaliyya-ն:

- Ի՞նչը Սիրիա բերեց Արաբական գարունը՝ սոցիալական վիճակը, թե՞...

- Երեւի նկատել էք, որ յեղափոխութիւնները բռնկւում են հիմնականում այն երկրներում, որոնց ղեկավարները բռնակալներ են, ովքեր կառավարում են երկիրը տասնամեակներ եւ նպատակ ունեն իշխանութիւնը մահից յետոյ փոխանցել իրենց զաւակներին: Տարիներ շարունակ այդ երկրների ժողովրդի մտածողութեան մէջ առկայ է եղել այդ գաղափարը: Սա արտացոլւել է նաեւ երկրների ղեկավարների կառավարման ոճում ընդդիմութեան նկատմամբ ճնշումներ, արքաներին վայել ապրելակերպ, ՁԼՄ-ների անազատութիւն... Սիրիան հէնց այսպիսի կառավարման ձեւ ունեցող երկիր է, որտեղ ընտանեկան իշխանութիւնը շատ ուժեղ է: Բաշար ալ Ասադը իշխանութեան գալով՝ հիմնեց իր հօր ստեղծած կոշտ անվտանգութեան համակարգի վրայ, վերացրեց ընդդիմութիւնը ու սկսեց, այսպէս ասած, «տնտեսութեան ազատականացման» քաղաքականութիւն վարել:

- Դուք իսկապէ՞ս կարծում էք, որ ռեժիմի փոփոխութեան դէպքում Սիրիան կը դառնայ աւելի ժո-

ղովրդավար երկիր: Իսկ այդ պարագայում Եգիպտոսի օրինակը Ձեզ չի՞ վախեցնում: Այնտեղ յեղափոխութիւնը մէկ տարի առաջ է աւարտւել, բայց անհանգիստ վիճակը դեռ շարունակւում է եւ ստիպում մարդկանց գնալ Թահիր:

- Անիրատեսական կը լինի հաւատալ, որ Սիրիան շատ շուտով կը դառնայ դեմոկրատական սկզբունքներով առաջնորդող երկիր՝ «Բասա» կուսակցութեան 50 տարի իշխանութիւնից եւ Ասադների 42 տարի տւեած բռնապետութիւնից յետոյ: Դժար է, քանի որ սոցիալական դասերի միջեւ առկայ է հսկայ տարաբաժանում, գոյութիւն ունեն կրօնական եւ անջատողական ուժեր, թոյլ արտադրութիւն, քաղաքական էլիտան էլ ոչ այնքան նորմալ մակարդակի է: Դեմոկրատիայի կերտմանը մասնակցում են հասարակական գանգաւածներ, որոնք պայքարում են բռնապետութեան դէմ, ուզում են, որ երկրում հասարակութիւնն աւելի ազատ լինի: Ինքս գտնում եմ, որ յեղափոխութիւնը Սիրիայում կը բերի աւելի ազատ վիճակի, բազմակարծութիւնը կը գերիշխի, կը ստեղծւեն լաւ հնարաւորութիւններ քննարկելու սոցիալական, քաղաքական, օրէնսդրական խնդիրներ, բայց, այնուամե-

նայնիւ, կայուն դեմոկրատիան աւելի դժար գործընթաց է:

- Ասադի աջակիցները մեղադրում են ընդդիմութեանն Արեւմտաքի ձեռքին խաղալիք լինելու համար: Ի՞նչ էք մտածում այս մասին:

- Դէ, համակարգը միշտ ճիշտ է իր հակառակորդներին քննադատելիս... Սիրիայում յեղափոխութիւնը բռնկւեց առանց որեւէ արեւմտեան երկրի աջակցութեան, իսկ դրանից դեռ մէկ տարի առաջ նոյն արեւմտեան երկրների ու Ասադի ռեժիմի յարաբերութիւնները գնալով աւելի էին ջերմանում, ու այդ ժամանակ ոչ ոք չէր խօսում սիրիական ժողովրդի եւ ընդդիմութեան մասին: Այո, շատերն են այս յեղափոխութիւնը կապում արեւմտաքի աջակցութեան հետ: Ամէն դէպքում, ես համոզւած եմ, որ մօտ ապագայում այդ ուժերը փորձելու են ազդել սիրիական ընդդիմութեան վրայ, ու ամէն ինչ անելու են, որ այն ծառայի իրենց շահերին: Սա մի երեւոյթ է, որի հետ մենք բախւելու ենք շատ շուտով:

- Սիրիական ընդդիմութիւնը բազմատարր է, հիմնականում երկրից դուրս է գործունէութիւն ծաւալում: Չկա՞յ արդեօք անհասկացածու-

թիւն ընդդիմութեան տարբեր կուսակցութիւնների միջեւ:

- Երբ ընդդիմութիւնը ներկայացնող «Մուսուլման եղբայրների» գործունեութիւնն արգելեց Սիրիայում, սիրիացի այլախոհները բաւական խնդիրներ ունեցան երկրի ներսում: Յեղափոխութիւնից յետոյ, դժբախտաբար, շատերը հեռացան երկրից: Անցած տարի ստեղծեց Սիրիայի ազգային խորհուրդը, որը միաւորեց իսլամիստներին, սեկուլեարիստներին, լիբերալներին... Սիրիայի ազգային խորհուրդը մեծ աջակցութիւն է վայելում նաեւ երկրի ներսում: Ես ինքս որեւէ քաղաքական ուժ չեմ ներկայացնում, ես քաղաքական գործիչ չեմ: Աջակցում եմ յեղափոխութեանն իմ յօդւածներով ու ստեղծագործութիւններով:

- Թուրքիան փաստօրէն դաւաճանեց Ասադի ռեժիմին: Ձեր նշած Սիրիայի ազգային խորհրդի կենտրոնակայանը Անկարայում է գտնուում: Վերջերս էլ պաշտօնական Անկարան Ասադին համեմատեց Սլոբոդան Միլոշեւիչի հետ: Արդեօ՞ք սիրիական ընդդիմու-

թիւնն իսկապէս վստահում է Թուրքիային եւ նրա հետ հետագայում էլ համագործակցութեան յոյսեր է կապում:

- Իմ կարծիքով, մենք թուրքերին չվստահելու պատճառ չունենք: Թուրքիան միջազգային ասպարեզում լուրջ դերակատարում ունեցող երկիր է, իսլամական երկրի լաւ օրինակ, աշխարհիկ պետութիւն, որն իր քաղաքացիներին տալիս է բազմաթիւ քաղաքացիական արտօնութիւններ՝ մեր երկրի ու արաբական միւս երկրների հետ համեմատած:

Սիրիական ընդդիմութեան վիճակն այսօր այնքան էլ յարմար չէ, որ Թուրքիայի ամէն քայլի նկատմամբ դետալային կասկածատութիւն դրսեւորի, հակառակը, պէտք է գործել Թուրքիայի ու միւս երկրների նկատմամբ վստահութեան հիմքի վրայ: Սպասուում է, որ յեղափոխութիւնից յետոյ նոր կառավարութիւնը գործելու է Սիրիայի ազգային շահերից ելնելով, եւ այդ գործում համագործակցութիւնը թէ՛ տեղական եւ թէ՛ միջազգային տարբեր ուժերի հետ ցանկալի է:

- Իսկ ինչո՞ւ է Ռուսաստանը հրաժարում պաշտօնական մակարդակներում սիրիական ընդդիմութեան ներկայացուցիչների հետ հանդիպումներից:

- Ռուսները ցանկանում են ընդամենը կոսմոսիկ փոփոխութիւններ անել, իսկ ռեժիմը նոյնը պահել: Նրանք աջակցում են ռեժիմին ու համարում, որ ընդդիմութիւնն է պատասխանատու երկրում տեղի ունեցող բռնութիւնների համար: Սա իրականութեան կոպիտ խեղաթիւրում է: Ըստ իս, Ռուսաստանի մնացած տեսակէտի հիմնական շարժիչ ուժն այն է, որ այդ երկրի ռեժիմը էապէս չի տարբերում Ասադի ռեժիմից: Պատճառներից է նաեւ ռուսների՝ Արեւմուտքից վիրաւորած լինելը, եւ նրանք ամէն ինչ անում են, որ առաւելագոյն օգուտներ քաղեն ստեղծած իրավիճակից:

- Հետաքրքիր է, ի՞նչ պլաններ ունի Ալ Բաիդան Սիրիայի հարցում: Յիշենք, որ օրեր առաջ Այման ալ-Ջաւահիրին ուղերձում, դիմելով սիրիացի ժողովրդին, կոչ էր արել մահմեդականներին կռուել իրենց



սիրիացի եղբայրների հետ ազատութեան համար, հիւանդ եւ անջատողական ասադների ռեժիմի դէմ. «Վիրաւորած Սիրիան դեռ արնահոսում է, եւ մսագործ Ասադը անզուսպ է ու կանգ չի առնում...»: Շատերը կասկածներ ունեն, որ սիրիական ընդդիմութիւնը կապեր ունի Ալ Քաիդայի հետ...

- Ալ Քաիդան մեկուսացած է թէ՛ միջազգային, թէ՛ տեղական ասպարեզում, ու նրանք այսօր հնարաւորութիւններ են փնտրում ապացուցելու, որ դեռ գոյութիւն ունեն: Բայց Ալ Քաիդան չի ողջունել սիրիական յեղափոխութեան սկիզբը, ինչը չի կարելի ասել եգիպտոսի եւ Թունիսի դէպքում... Եւ Ջաւահիրի այս խօսքերն առաջին անդրադարձն են սիրիական յեղափոխութեանը, ու ինձ թւում է՝ դա տարօրինակ է ու կասկածելի: Այստեղ գործ ունենք ահաբեկչական խմբաւորման հետ, որը փորձում է իր համար ճանապարհ հարթել իբր թէ սիրիացի ժողովրդի պայքարին սատարելու միջոցով:

Կայ ինֆորմացիա, որ այս տարւայ սկզբին ազատ է արձակւել Ալ Քաիդայի պարագլուխ Մուստաֆա Սեթմարիան Նասարը (Աբու Մուսաբ ալ-Մուրիմ), ում Սիրիային էր փոխանցել ԱՄՆ-ը: Սա էլ է տարօրինակ:

Յեղափոխութիւնը մեր հասարակութեան առողջ լինելն է փաստում. այս գործընթացին մասնակցել են տարբեր սերունդներ, մահմեդականներ եւ ոչ մահմեդականներ, կանայք եւ տղամարդիկ... Ազատութիւնն է յեղափոխութիւնների հիմնական արժէքը, իսկ Ալ Քաիդայի գործողութիւնների հիմքում ընկած է վրէժը:

Ես ձեզ հաւաստիացնում եմ, որ սիրիական ընդդիմութիւնը կապւած չէ Ալ Քաիդայի հետ: Այլ հարց է, արդեօ՞ք կան անհատներ, որոնք շփումներ ունեն այդ կառոյցի հետ: Այ սա հարց է...



- Կարո՞ղ էք նկարագրել, թէ ինչ է կատարւում Դամասկոսում այս պահին... Սեզ հասել են լուրեր, որ մարդիկ վախից անգամ տանից դուրս չեն գալիս:

- Սովորական է ամէն ինչ, բայց ամէն դէպքում զգում ես վերահսկողութեան ծանր սուերը փողոցներում: Գիշերային երթեւեկութիւնը պակասել է: Այո, մարդիկ փորձում են ինչքան հնարաւոր է քիչ դուրս գալ փողոց... Աւելի ակտիւ են արւարձանները, դրանք են հէնց յեղափոխութեան ծագման օջախները:

- Հայաստանը շատ մտահոգ է Սիրիայում ապրող հազարաւոր հայերի ճակատագրով... Եթէ յեղափոխութիւնը յաղթի, Սիրիայում բնակող հայերի վրայ ճնշումներ կը լինե՞ն:

- Ի՞նչ պէտք է պատահի հայերին: Չեմ հասկանում, թէ ինչու է առաջացել այն մտավախութիւնը, թէ նրանք ճնշումների կենթարկւեն: Սա, կարծում եմ, անելորդ անհանգստութիւն է: Որեւէ մէկը հայերին որեւէ բանում չի մեղադրում... Յամենայն դէպս, ես նման բան չեմ լսել: Հայերն ապրում են այստեղ Առաջին համաշխարհա-

յին պատերազմից յետոյ: Նրանք լիովին ինտեգրւած են սիրիական հասարակութեանը եւ նրա մի մասն են կազմում:

- Կանխատեսե՞ք, խնդրում եմ, թէ ե՞րբ խաղաղութիւնը կրկին կը վերադառնայ Սերձաւոր Արեւելք:

- Ոչ մօտ ժամանակներս... Տարածաշրջանում դեռ քաղաքական եւ հոգեբանական ճնշումներ կը լինեն՝ մինչեւ հասարակութիւնները սովորեն նոր պայմաններին: Կան մի շարք խնդիրներ, որոնք միմեանց միջեւ պայքարից տարբեր ինչ-որ բան են: Բացի այդ, չմոռանանք արաբա-իսրայէլական հակամարտութեան մասին, որը չի լուծւի, մինչեւ Պաղեստինի անկախութիւնը չճանաչի: Իսրայէլն արաբական աշխարհում միշտ եղել է աներածութիւնների ու բռնակալութեան դաշնակից:

Ես սին Սալեհի հետ զրուցեց Նարինէ Դանեղեանը՝ յատուկ Մեդիամաքսի համար:

22 Փետրւար 2012

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿ

Ժողովուրդների գլխին եկած մեծ արհաւիրքները, այդ թում մասնաճիւղի ցեղասպանութիւնը առաջին համաշխարհային պատերազմի օրերին, գալիս են ապացուցելու այն ցաւալի փաստը, որ մարդկութիւնը՝ որպէս ամբողջութիւն, չի յաջողել իրականացնել զանազան ազգերի զոյակցման երազանքը: Սակայն այսպիսի աղէտների ժամանակ մասն երեսան են գալիս անձուէր մարդիկ, որոնք իրենց համակրանքով եւ բարեգործութեամբ կարողանում են թեթեւացնել զոհերի ցաւը: Հայ ժողովուրդը Մեծ Եղեռնի ժամանակ ունեցել է իր բարեկամները, որոնք մինչեւ իրենց կեանքի վերջը շարունակել են օգնել նրան: Դրանց շարքին են նորեգացի բարերար՝ Ֆրիտեօֆ Նանսենը եւ գերմանացի գրող ու լուսանկարիչ Արմին Վեզները:

ՆՈՐԵԳԱՅԻ ԲԱՐԵՐԱՐ ՖՐԻՏԵՕՖ ՆԱՆՍԵՆԸ

Նորեգացի բեւեռախոյզ, օվկիանոսագէտ, ֆիզիկական օվկիանոսագիտութեան հիմնադիր, մարդասէր եւ հասարակական-քաղաքական գործիչ Ֆրիտեօֆ Նանսենը պաշտպանել է հայ ժողովրդի ոտնահարած իրաւունքները:

Նանսենը սովորել է Քրիստիանայի համալսարանի բնագիտութեան ֆակուլտետում (1897 թ-ից՝ կենդանաբանութեան պրոֆեսոր): 1888 թ-ին դահուկներով կտրելու անցել է Գրենլանդիան: Այնուհետեւ մշակել է Հիւսիսային բեւեռ հասնելու նախագիծ. իրագործել է իր կառուցած «Ֆրամ» նաւով, որի համար ընտրել է Սանկտ Պետերբուրգի ԳԱ պատուաւոր անդամ: Նորեգիայի՝ Շելդիայից անջատելուց (1905 թ.) յետոյ նշանակել է Մեծ Բրիտանիայում Նորեգիայի դեսպան: Առաջին աշխարհամարտի (1914-18 թթ.) աւարտից յետոյ, որպէս Ազգերի լիգայի գերագոյն կոմիսար, Նանսենն զբաղւել է ռազմագերիներին հայրենիք վերադարձնելու եւ գաղթականների խնդիրներով: Օգնութիւն է կազմակերպել Պոլովժիէի սովետական համար (1921 թ.):

Նանսենի հասարակական գոր-

ծունեութեան մէջ կարեւոր տեղ է գրաւել հայաստան աշխատանքը, ջանքերը Հայ դատի արդարացի լուծման եւ հայ գաղթականների դրութեան բարելւման համար: Նա խստագոյնս դատապարտել է սուլթան Աբդուլ Համիդ II-ի եւ երիտթուրքերի կազմակերպած հայերի ցեղասպանութիւնը: Նանսենը մեծապէս օգնել է գաղթականներին. բազմահազար հայ փախստականներ ստացել են «Նանսենեան անձնագրեր», որը մասամբ թեթեւացրել է նրանց դրութիւնը: Առաջարկել է պայմաններ ստեղծել հայ գաղթականներին Խորհրդային Հայաստան հայրենադարձնելու համար, գլխաւորել է հայրենադարձութեան յանձնաժողովը (1925-29 թթ.):

Այդ նպատակով Նանսենն իր յանձնաժողովով 1925 թ-ի Յունիսին ժամանել է Երեսան, եղել է հանրապետութեան տարբեր շրջաններում, պարզել գաղթականներին ընդունելու հնարաւորութիւնները, մասնակցել Շիրկանալի (Շիրակի ջրանցք) բացմանը: Վերադառնալով Ժնև՝ Ազգերի լիգային ներկայացրել է զեկուցագիր, ըստ որի՝ օգնութիւն ցուցաբերելու

դէպքում Հայաստանը կարող է տեղաւորել 25-30 հզ. գաղթականի: Տեսնելով, որ Ազգերի լիգան դանդաղում է հայ գաղթականութեան հայրենադարձման հարցում, Նանսենն ինքն է մարդասիրական ուղիներով հայթայթել անհրաժեշտ միջոցներ եւ տրամադրել 7 հզ. հայ գաղթականների հայրենադարձութեան կազմակերպման համար:

Նանսենի բազմաթիւ յօդուածներ, զեկուցագրեր, ելոյթներ նւիրած են հայ ժողովրդի պատմութեանն ու Հայաստանին: 1927 թ-ին նորեգերէն հրատարակել է նրա «Հայաստանում» ծաւալուն գիրքը, որը թարգմանւել է անգլերէն ու ֆրանսերէն՝ «Հայաստանը եւ Մերձաւոր Արեւելքը», գերմաներէն՝ «Խաբւած ժողովուրդ» վերնագրերով: Ընդ որում, գրքի վրայ կարմիր տառերով գրւած է. «Մեղադրանք Անտանտի ու Ազգերի լիգայի դէմ»:

Մարդասիրական գործունեութեան համար 1922 թ-ին Նանսենին շնորհւել է Նոբելեան մրցանակ: 1938 թ-ին նրա՝ Գաղթականների միջազգային գրասենեակը նույնպէս արժանացել է Նոբելեան մրցանակի՝ «Նանսենեան անձնագր-

ԱՄՆԵՐԸ

րերի» ստեղծման համար: 1954 թ-ին ՄԱԿ-ի Փախստականների գծով կոմիսարիատը սահմանել է Նանսենի մրցանակ (սկզբում կոչվել է «Նանսենի մեդալ»). տրուում է 1955 թ-ից:

Նանսենի մասին նկարահանվել է «Աշխարհի խիղճը» (2009 թ.) ֆիլմը:

Երեւանում գործում են «Ֆրիտեֆ Նանսեն հիմնադրամը» (նախագահ՝ Ֆելիքս Բախչինեան), Ֆրիտեֆ Նանսենի անվան մանկատունը:

Նանսենի անունով կոչվել են փողոցներ եւ դպրոցներ Երեւանում, Դիլիջանում, Արմավիրում, Սպիտակում, Ստեփանավանում: Երկրաշարժից յետոյ Սպիտակ քաղաքում նորեգացիները Նանսենի թռան՝ ճարտարապետ Էյզիլ Նանսենի նախագծով 1989 թ-ին կառուցել են հիւանդանոց, որի բակում տեղադրվել է Ֆրիտեֆ Նանսենի կիսանդրին, Երեւանի Նոր Նորք թաղամասի զբոսայգում՝ «Նանսենեան անձնագրի» արձանը:

«Ֆրիտեֆ Նանսենի գործն Աւետարանի մարդկային թարգմանութիւնն է»:

Գարեգին Ա,

Ամենայն հայոց կաթողիկոս

«Նանսենի «Խաբւած ժողովուրդ» գիրքը կարիճի պէս իր պոչի մէջ խայթոց ունի, որը վիրաւորում է հաճկատարութիւնը բոլոր նրանց, ովքեր խոստացան աւելին, քան կատարեցին»:

«Թայմս» օրաթերթ,

Անգլիա

«...Կարեկցում են հայ ժողովրդին, որ խճճեց եւրոպական քաղաքականութեան մէջ: Նրա հա-



Նորեգացի բեռնախոյզ, օվկիանոսագետ, մարդասէր եւ հասարակաքաղաքական գործիչ Ֆրիտեֆ Նանսենը պաշտպանել է հայ ժողովրդի ոտնահարած իրաւունքները: Նա դատապարտել է երիտթուրքերի կազմակերպած հայերի ցեղասպանութիւնը եւ մեծապէս օգնել քաղաքացիական հայ գաղթականներին:

մար աւելի լաւ կը լինէր, եթէ իր անունը երբեւէ հնչած չլինէր եւրոպացի որեւէ քաղաքագետի բերանից: Սակայն հայ ժողովուրդը բնաւ չի կորցնում իր յոյսը: Նա յամառ, անխոնջ աշխատում եւ սպասում է, շարունակ սպասում:

Նա սպասում է մինչ օրս»:

Ֆրիտեֆ Նանսեն

«Այս մարդը (Նանսենը) իր ուսերին առաւ մի գործ, որը չհամարձակեց վերցնել խոշոր պե-

տութիւնների ոչ մի ներկայացուցիչ: Մենք՝ հայերս, միշտ կը սիրենք եւ կը յարգենք նրան եւ խորին երախտագիտութեամբ կը խոնարհուենք նրա՝ մի մարդու անւան առջեւ, որին ինքը՝ Բարձրեալն էր ուղարկել պաշտպանելու եւ ներկայացնելու մեր դատը»:

Լոնդոնահայ համայնք, 1930 թ.

ԳԵՐՄԱՆԱՅԻ ԼՈՒՄԱՆԿԱՐԻՉ ԱՐՄԻՆ ԹԵՕՖԻԼ ՎԵԳՆԵՐԸ

Վեգներ (Wegner) Արմին Թեօֆիլ (Armin Theophil, 16.10.1886, Էլդերֆելդ - Վուպերտալ - 17.5.1978, Յոնոմ), գերմանացի գրող, հրապարակախօս: Սովորել է Բրեսլաուի, Ցիւրիխի եւ Բեռլինի համալսարաններում (1908-1913), ստացել իրաւագիտութեան դոկտորի աստիճան (1914): Սասնակցել է առաջին համաշխարհային պատերազմին: 1915-1916-ին գերմանական սանիտարական ծառայութեան կազմում յղել է Թուրքիայում, տեսել Տէր-Չոր (Դէյր էլ-Չոր) քլած բազմահազար հայերի ողբերգութիւնը, նրանց խոշտանգումները, լուսանկարել սպանդի շատ տեսարաններ:

Վեգները գրի է առել իր տեսածն ու ապրածը եւ լուսանկարների հետ մէկտեղ ուղարկել Գերմանիա՝ առանձին մարդկանց ու մամուլին: Սակայն դրանք չեն հրապարակւել: Յետագայում այդ նամակները եւ նոյն շրջանում գրած այլ նիւթեր ամփոփւել են

նրա «Անվերադարձ ճանապարհ» (1919) գրքում:

Վեգները ծաւալել է պացիֆիստական գործունէութիւն: Տարւելով սոցիալիստական գաղափարներով՝ հանդէս է եկել յեղափոխական բնոյթի հրապարակախօսութիւններով ու յօդածներով, 1919-ին խմբագրել է հրատարակել է «Դեր Օստեն» («Der Osten») առաջադիմական թերթը:

1919-ին Վեգները հրապարակել է բաց նամակ («Կտակ անպատում»)՝ ուղղւած ԱՄՆ-ի պրեզիդենտ Վ. Վիլսոնին, փաստերով հաստատել թուրք կառավարողների ծրագրած հայկական ցեղասպանութիւնը եւ խարազանել արեւմտեան իմպերիալիստ պետութիւններին՝ որպէս մեղսակիցների: «1915 թ. գարնանը, - գրել է նա, - երբ թուրքական կառավարութիւնը ձեռնամուխ եղաւ երկու միլիոն հայերի՝ երկրի երեսից ջնջելու իր հրեշաւոր ծրագրի իրականացմանը ...», «Չկար մէկը, որ

խանգարէր ... խելագարւած յանցագործների գործողութիւնները» (Wegner Ը. Չ., «Am Kreuzweg der Welten», էջ 224):

1921-ին Վեգները որպէս վկայ ներկայ է եղել Ս. Թեհլերեանի դատավարութեանը Բեռլինում, հաւաքել է սղագրական նիւթերը, գրել առաջաբան («Արդար վճիռ») եւ հրատարակել առանձին գրքով («Թալեաթ Փաշայի դատավարութիւնը...», 1921):

1922-ին հրատարակւած «Եիչ Արարատից» գրքոյկում, ներկայացնելով Չմիւռնիայի կոտորածները, Վեգները դարձեալ մերկացրել է Թուրքիայի կառավարող շրջանների հայատեաց քաղաքականութիւնը եւ արեւմտեան տէրութիւնների անտարբերութիւնը:

1933-ին, ֆաշիստների իշխանութեան գլուխ անցնելուց յետոյ Յիտլերին ուղղած բաց նամակում Վեգները դատապարտել է հրէական ջարդերը, բանտարկւել է, նետուել՝ համակենտրոնացման



ճամբար: 1934-ին փախել է Գերմանիայից եւ երկարատեւ չարչարանքներից յետոյ հաստատուել Զոռնում (Պերսի Էքշտայն անուան տակ): Վեզները մէկն է այն 250 գրողներից ու գործիչներից, որոնց գրքերն արգելել եւ այրել են ֆաշիստական Գերմանիայում:

Վեզները գրել է բանաստեղծութիւններ, պատմածքներ, էսէներ, նովելներ, ճանապարհորդական նոթեր, որոնց բնորոշ են մարդասիրութիւնը, եղբայրութեան գաղափարը, որեւէ ազգի հալածանքի մերժումը: Բանաստեղծութիւնների առաջին գրքոյկը հրատարակել է դեռեւս դպրոցական տարիներին: 1910-ին տպագրուել է «Արծակ բանաստեղծութիւններ» ժողովածուն:

Վեզները «Երկու քաղաքների միջեւ» (1909), «Լսիր իմ խօսքը, Աննա Սարիա» (1912), «Քաղաքների դիմապատկերը» (1917), «Հազար նպատակներով փողոցը» (1924) բանաստեղծութիւնների ժողովածուներում գերմանական գրականութեան մէջ ներմու-

ծել է մեծ քաղաքի թեման: Այդ թեման շօշափած է նաեւ նրա լաւագոյն վեպերում՝ «Խոստովանութիւն» (1922), «Մոնի կամ Աշխարհը ներքեւից» (1929): Վեզներին հետաքրքրել է արեւելեան թեման: Գերմանական գրականութեան մէջ նա առաջինն է ներկայացրել Արեւելքն առանց վարդագոյն երանգաւորման՝ «Երանութեան տանը» (1920), «Պատանի Զուսէյնը» (1921) եւ այլ պատմածքներ: Վեզների ստեղծագործութեան մէջ զգալի տեղ են գրաւում ճանապարհորդական նոթերը՝ «Աշխարհների խաչմերուկում» (1930), «Պատւի առնել» (1930, տպաւորութիւններ Սովետական Ռուսաստանից եւ Հայաստանից), «Մեքենաները տափաստանում» (1932), «Որս հազարամեայ երկրում» (1932):

1927-ին սովետական կառավարութեան հրաւերով Վեզներն իր կնոջ՝ արծակագիր Լ. Լանդաուի հետ այցելել է Մոսկւա, մասնակցել Զոկտեմբերեան յեղափոխութեան X տարեդարձի հանդիսու-

թիւններին, եղել Հայաստանում, հանդիպել իր հին բարեկամներին (Կարապետ Մելիք-Օհանջանեան, Յակոբ Զօրեան եւ ուրիշներ), որոնց հետ ծանօթացել ու մտերմացել էր Բեռլինում, 1918-1920 թթ.), Երեւանի համալսարանում դասախօսութիւններ կարդացել գերմանական նոր պոէզիայի եւ Զին Յունաստանի թատրոնի ու թատերգութեան մասին: Միաժամանակ միւթեր է հաւաքել հայերի մասին եռերգութիւն գրելու համար: Գործը մնացել է անաւարտ: Տպագրուել է միայն մի հատուած՝ «Պատանի Ադամը» վերնագրով: Վեզները վերստին Հայաստան է այցելել 1968-ին:

Մինչեւ կեանքի վերջը նա հետաքրքրուել է Հայաստանով ու հայերով, հանդէս եկել նրանց նւիրած յօւածներով, էսէներով, յուշերով: 1972-ին ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում լուսանկարների ցուցադրումով զեկուցումներ է կարդացել Մեծ եղեռնի եւ բարգաւաճող Սովետական Հայաստանի մասին:



ԹԱՐԻՉԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՅԸ ԼԻՆԻԱՆ ՈՒ ՂԱԼԱՆ ՄԻԱՃՆՈՒՄ Է ԻՐԱՐ

Աշոտ Մուրադխանեան

(Թեմական դպրոցի նախկին սան, հետագայում ուսուցիչ եւ տեսուչ)



Ատրպատականի Հայոց Թեմական դպրոցի դերը շատ խոշոր եւ նշանակալի է եղել ոչ միայն Թաւրիզում կամ Ատրպատականում, այլ եւ ամբողջ իրանահայ կեանքում: Նա բարերար ազդեցութիւն է գործել՝ տալով հայրենասէր, գաղափարական, հանրային կեանքին նւիրած, հայկական միջնակարգ լրիւ կրթութիւն ստացած, հայ մշակոյթին հմուտ ուսուցիչներ, տեսուչներ, լրագրողներ, հանրային ու ազգային աշխատանքներին նւիրած անկաշառ եւ անխարդախ բազմաթիւ գործիչներ:

Այս գրութեամբ ուզում եմ ներկայացնել նրա կատարած երկու շատ կարեւոր դերի մասին, որոնք ամբողջովին վերաբերում են Թաւրիզի հայ կեանքին: Մինչ այդ հարկ եմ համարում համառօտ

կերպով ներկայացնել հին Թաւրիզը, որով աւելի ցայտուն կերպով երեւան կը գայ այդ երախտաշատ դպրոցի դերը:

Ինչպէս յայտնի է, Թաւրիզի հայութիւնը բնակւում է երկու իրար կից թաղերում՝ Բերդաթաղ (Ղալա) եւ Լիլաւա: Այս վերջինը տեղացի ազրբեջանցիների կողմից կոչւում է Լէյլաթաղ:

Բերդաթաղը կամ Ղալան Թաւրիզի ամենահին եւ մինչեւ օրս կանգուն հայաբնակ թաղն է. այսօր սակայն դժբախտաբար գտնւում է անշուք վիճակում. հայութիւնը այնտեղ շատ է նւազել. այդ թաղի հայերին բնիկներ կարելի է համարել, որոնք ունէին իրենց յատուկ բարբառը, որից այլեւս գրեթէ հետք չի մնացել: Հին օրերին այլ հայաբնակ թաղեր եւս գոյութիւն են ունեցել, որոնք ինչ-ինչ

պատճառներով շատ վաղուց այլեւս չկան. մի ժամանակ դրանց յիշողութիւնը հին թաւրիզեցիների մէջ, հայ կամ մահմեդական, պահած էր. դրանցից միայն երկուսի հետքերը դեռեւս մնում են. առաջինը՝ Մարալան թաղը իր Աստուա-



ծածին մատուռով ու այգիով, որը մինչեւ այժմ ուխտատեղի է հայերի համար. այնտեղ կան հին հայկական գերեզմաններ, տապանաքարերով կան առանց քարերի:

Երկրորդը՝ Թաւրիզի մեծ փակ շուկայի ծայրամասում գտնուող մեծ Մէյդան առետրական հրապարակի Սահաբբ-օլ-Ամիր մզկիթն է, որն ըստ աւանդութեան եկեղեցի է եղել. գիտակ անձինք որպէս փաստ մատնանշում են մզկիթի յատակագիծը եւ շէնքի կառուցածքը, ըստ որում դա եղել է յար եւ նման քրիստոնէական բազիլիկաների:

Երկրորդ թաղը, Լիլաւան, աւելի բազմամարդ է եղել անցեալում, ինչպէս նաեւ այսօր: Բնակիչները Ատրպատականի զանազան կողմերից, գլխաւորաբար Ղարադաղից եկած հայեր են եղել. երբեմնի զուտ հայաբնակ թաղերը, այսօր այլեւս նախկին պատկերը չունեն. հեռացողների տները զնում են տեղացի մահնեղականները եւ այժմ համարեա խառն են ապրում:

Թաւրիզի զոյգ թաղերի ընդհա-



Պատմութիւնը գրող յանձնախումբ՝ ձախից աջ՝ Նստածներ՝ Արամ Գառնէ, Աշոտ Մուրադխանեան, Տաճատ Պօղոսեան. Կանգնածներ՝ Հայկ Օհանեան, Արամ Մուրադեան, Վարդան Յարութիւնեան, Արմենակ Մելիք Աբրահամեան.

նուր եւ լայն գծերով նկարագրութիւնն անելուց յետոյ անցնենք բուն միւթին:

1-Չակառակ այն հանգամանքին, որ այս երկու թաղերն իրար կից եւ այսքան մօտիկ են եղել, թաղերի հայերի փոխարաբերութիւնները բարեկամական չեն եղել: Ոմանք այս անսիրտ վերաբերմունքը վերագրում են այդ թաղերում տիրապետող դիրք ունեցած մեր քաղաքական երկու կուսակցութիւնների միջեւ եղած հակամարտութեանը. սա ճշմարտու-

թեան միայն մի մասն է եւ վերաբերում է աւելի հետագայ ժամանակներին. ասացի որ Բերդաթաղի հայերը բնիկ են. ով գիտէ ո՞ր ժամանակաւանց հաստատուած. գուցէ եւ հին պատմական ժամանակաշրջանից, երբ Չայաստանը պետութիւն էր. Թաւրիզը գտնուելով պատմական Չայաստանի սահմանին շատ մօտիկ եւ լինելով վաճառաշահ մեծ քաղաք, Արեւելք- Արեւմուտք համաշխարհային այն օրերի իմաստով առետրի տարանցիկ մեծ ճանփի



Թեմական դպրոցի բազմամեայ տեսուչ Կարապետ Պիօնեանի 25-ամեայ յոբելեանական հանդէսից մի տեսարան, 1924թ. Թաւրիզում:



մի խոշոր կենտրոն, չէր կարող հայ վաճառականին կամ արհեստաւորին դէպ իրեն չգրաւել, որով կազմւել է Թաւրիզի հայ հին գաղութը եւ բարեկեցիկ կեանք է ունեցել. այս մտածումս արդարաց-

Ա.Հ.Թեմական դպրոցի 1927-28 ուս.տարւայ հոգաբարձական կազմը, ուսուցչական կազմը եւ ընթացաւարտները

նող փաստ կարող է ծառայել այն վկայութիւնը որ անում է մեր

պատմագիր Կիրակոս Գանձակեցին, ըստ որում Կիլիկիայի Յեթում թագաւորը Մունդուլիայից վերադարձի ճամփին, հիւր է մնում Թաւրիզի հայերի մօտ, մօտաւորապէս մի ամիս:

Հայրենիքից հեռու գտնուող հայերն իրենց հիւր արքայի պատւին եւ փառքին վայելող հիւրընկալութիւն ցոյց տալու համար պէտք է թաւրիզուին մեծատուն լինէին, որ կարողանային օտարութեան մէջ մեծարել հայ արքային եւ ինչու ոչ՝ նաեւ ողբալ իրենց պանդխտութեան եւ նւիրական հայրենիքի մեծ մասի բռնութիւնների ենթակայ եւ ոտքի կոխան լինելը, սելջուկ, թուրք, մոնղոլ խաժամուժի կողմից:

19-րդ դարու վերջին եւ 20-րդ դարու ակզբում, երբ թաւրիզում հայ մշակութային կեանքը վերելք էր ապրում, հայ քաղաքական կուսակցութիւններն սկսեցին թաւրիզում արմատաւորել. հնչակեանները՝ Ղալայում, դաշակցականները՝ Լիւալայում: Սկսեց բուռն պայքար, մինչեւ իսկ արիւն թափեց. զոյգ թաղերի ոչ բարեկամական յարաբերութիւնները խստացան, որը սակայն երկար չտևեց:

Թաղերի այս ոչ բարեկամական յարաբերութիւնները բացասաբար էին անդրադառնում թաւրիզահայ կրթական գործի վրայ: Լիւալան իր տարրական դպրոցից եւ մանկական պարտզից զատ օժտւած էր նաեւ միջնակարգ դպրոցով, Ղալան միջնակարգ դպրոց չուներ:

Երկու թաղերի ոչ բարեկամական յարաբերութիւնները, եւ Ղալայում միջնակարգ չլինելու իրողութիւնը, մտահոգել էր նաեւ ազգային բարձրագոյն իշխանութեանը՝ Թեմական Խորհրդին: Եւ ահա երկար խորհելուց եւ ծրագրեր կազմելուց յետոյ, որոշուեց է երկու թաղերի համար բանալ տարիներից ի վեր փայտալուծ թեմական դպրոց. այդ նպատակով գնում են երկու թաղերի միջեւ գտնուող մի ընդարձակ այգի իր պալատաման շէնքով ու հիմքը դնում Ատրպատականի Հայոց Թեմական-Կենտրոնական Դպրոցի, որն իր ծրագրով նոյնն էր, ինչ

Կովկասի մեր միջնակարգ այլ դպրոցները:

Այս նորահաստատ դպրոցը ոչ լիւալացի եւ ոչ Ղալացի հայինն էր, այլ ամբողջ Ատրպատականի հայերինն էր, ինչպէս եւ ողջ հայութեանը: Թեմական դպրոցում սովորել են բացի Իրանի զանազան քաղաքներից եկած տղաներ ու աղջիկներ, այլ նաեւ Կովկասից եկածներ:

Երկու թաղերի դպրոցներից եկած պատանի-ուհիները դիմում են նորաբաց դպրոցը, սկսում է սերտ շփում. իրար ճանաչում, ծանօթանում ու մտերմանում են: Կուսակցութիւնների միջեւ եղած հակամարտութիւնը եւս մեղմանում է մինչեւ այն աստիճան, որ հնչակեաններից կազմւած Հոգաբարձութիւնը Ղալայի մանկապարտզի եւ Արամեան դպրոցի համար ուսուցիչներ է հրաւիրում Լիւալայից:

Թաւրիզում գտնուող կրթական եօթ օջախներն էին դիմում կրթական տարիք ունեցող բոլոր աղջիկներն ու տղաները. դպրոցներից երեքը ազգային էին՝

- 1-Ղալայի Արամեան եւ Սբ.Աննայեան տարրական դպրոց
- 2-Լիւալայի Հայկազեան-Թամարեան վեցդասեան դպրոց, որ յետոյ դարձաւ տարրական
- 3-Ամերիկեան տղայոց դպրոց
- 4-Ամերիկեան օրիորդաց դպրոց
- 5-Ֆրանսիական Լազարիստների տարրական տղայոց դպրոց
- 6-Ֆրանսիական Օրիորդաց որբանոց-դպրոց
- 7-Ատրպատականի Հայոց Թեմական Կենտրոնական Դպրոց:

Ոչ ազգային դպրոցներն էին յաճախում հայ եւ աղբրեջանցի աշակերտ-ուհիներ, սակայն ճնշող մեծամասնութիւնը կազմում էին հայերը, որի հետեւանքով այդ դպրոցների վարչութիւնները հայ աշակերտութեան համար յատկացրել էին հայկական ծրագիր. աւանդուեցին հայոց լեզու, հա-

յոց պատմութիւն եւ հայ գրականութիւն:

2. Յիշւած բոլոր դպրոցների եւ յատկապէս Թեմականի ու Մեմորիալի դերը շատ խոշոր է թաւրիզի հայոց հին բարբառի վերանալու հարցում. Հազարաւոր տղայ ու աղջիկ ոչ միայն իրենց բարբառով չէին խօսում, այլ եւ գրական լեզուն տուն էին տանում:

Առանց դոյզն իսկ չափով միտում ունենալու մոռացութեան տալու կամ նսեմացնելու Լիւալայի նախկին միջնակարգի ունեցած երախտիքը թաւրիզի հայութեան կեանքում, պիտի շեշտել, որ Թեմական դպրոցն աւարտած սերունդները շնորհիւ իրենց նւիրեալ ուսուցիչների ունէին ազգային-մշակութային խորը եւ հաստատուն ըմբռնումներ. հէնց այդ երիտասարդ-ուհիներն էին, որ հիմնովին փոխեցին թաւրիզահայ կեանքը, ապրելակերպի նոր կարգ ու սարք մտցրին ընտանիքների մէջ, հայկականութեան առողջ ոգի ներշնչեցին իրենց շրջապատին եւ դա այն ժամանակներում, երբ հանուր հայութեան կեանքը բուռն վերելք էր ապրում երկու հատւածներում էլ:

Շատ հետաքրքրական կը լինէր թաւրիզի բարբառի ուսումնասիրութիւնը կատարել, բայց թուեց է թէ համարեա անկարելի է, որովհետեւ կենդանի խօսք չի մնացել այդ բարբառից. բացառութիւն կարելի է համարել երգիծական մի երկու պարբերականների մէջ լոյս տեսած զաւեշտական գրութիւններ:

Թեմական դպրոցը մեզ պարզեւած շատ եւ շատ բարիքներից զատ, վերոյիշեալ երկու հարցերում խոշոր եւ ակնառու դեր է կատարել եւ հանդիսացել է սատարիչ, որի հանդէպ երախտագիտական ջերմ զգացումներ պիտի տածել:

Աղբիր՝ «Պատմութիւն Ատրպատականի Հայոց Թեմական դպրոցի», Թեհրան 1981, տպր. «Ալիք»

ՇԱՄԼՈՒԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՈՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ



ՁՈՒԿԸ...

Ահմադ Շամլու

Ես կարծում եմ,
Որ չի եղել սիրտս երբեք
այսպես տաք ու
այսպես բոսոր:

Ես զգում եմ,
Որ մահաբեր այս գիշերայ
Վատթարագոյն վայրկեաններում
Չազարաւոր արեւների
Աղբիւր է իմ սրտից բխում՝
Վստահութեան համոզմունքից,

Եւ զգում եմ
Անյուսութեան այս աղուտի անկիւններում
Չազարաւոր անտառներ են
յանկարծ
ելնում:

* * *

Ո՛վ դու կորած վստահութիւն,
Ո՛վ փախուստի դու իմ ձկնիկ,
Ես ջրշեղջ եմ պարզ ու վճիտ՝
Չայելանման աւազանների լաբիրինթոսում:
Արդ, հրաշքով սիրոյ
Չայելանման աւազաններից

Դէպ ինձ
Գանձալ գտիր:

* * *

Ես կարծում եմ,
Որ չի եղել ձեռքս երբեք
Այսպես մեծ ու
Այսպես զւարթ:

Ես զգում եմ,
Որ կարմրաւուն արցունքներում իմ աչքերի,
Ինչ-որ երգի
Անմայրամուտ արեգակն է շնչում ահա,
Եւ զգում եմ,
Որ իմ սրտի բաբախումից՝
Երակներիս ամէն մէկում,
Չիմա, ինչ-որ քարաւանի

Արթնացնող զանգն է հնչում:

* * *

Մտաւ դռնից նա մի գիշեր,
Մերկ էր ինչպէս ոգին ջրի,
Կրծքում՝ երկու ձկնիկ,
Ձեռքում՝ մի հայելի.
Մամռարոյր էր վարսերը թաց
ու մամռահիւս:

Ես գոչեցի
Անյուսութեան անդաստանից.
-Ո՛վ իմ գտած վստահութիւն,
Այսուհետեւ չեմ թողնի քեզ...

Թարգմանեց՝ Նորվան

ՉՈՒԿԸ...

Ահմադ Շամլու

Ես մտածում եմ
սիրտս երբեք չի եղել
այսպես
կարմիր ու տաք

զգում եմ
այս մահաժին գիշերայ
ամենամուս պահերին
արեւի հազարաւոր աղբիւրներ են բխում
սրտումս
անկասկած

զգում եմ վիատութեան այս աղուտի
ամէն մի անկիւնում
հազարաւոր զւարթ անտառներ են
ծլում հողից
յանկարծ

ով դու կորած վստահութիւն
ով խուսափող ծուկ
Իրար մէջ արտացոլւած հայելիների ճահճում
ես պարզ մի լճակ եմ հիմա սիրոյ կախարդանքից
հայելիների ճահճուտներից մի ելք գտիր դէպ ինձ

Ես մտածում եմ
երբեք չի եղել իմ ձեռքը
այսպես մեծ ու ուրախ

զգում եմ աչքերիս մէջ
մի երգի անխաւար արեւն է խոր շնչում
կարմրագոյն արցունքի ջրվէժի փոխարէն

զգում եմ
իմ ամէն մի երակում
սրտիս զարկերի հանգոյն
հիմա
մի-մի քարաւանի արթնութեան
զանգակներ են զնգում

մի գիշեր
դռնից ներս մտաւ նա
մերկ
նման ջրի ոգուն
կրծքին երկու ծուկ
ձեռքին հայելի
թաց վարսերը մամռաբոյր
մամուռի պէս խաչի

Ես վիատութեան շենից գոռացի
ով զտած վստահութիւն
ես քեզ ձեռքիցս բաց չեմ թողնելու...

Թարգմանեց՝ Ռ. Ամիրխանեան

ماهی

من فکر می‌کنم
هرگز نبوده قلب من
اینگونه
گرم و سرخ:

احساس می‌کنم
در بدترین دقایق این شام مرگ‌زای
چندین هزار چشمه‌ی خورشید
در دلم

می‌جوشتند از یقین!
احساس می‌کنم
در هر کنار و گوشه‌ی این شوره‌زار یأس
چندین هزار جنگل شاداب
ناگهان
می‌روید از زمین.

آه ای یقین گم‌شده، ای ماهی گریز
در برکه‌های آینه‌لغزیده توبه‌تو!
من آبگیر صافی‌ام، اینک! به سبزه عشق!
از برکه‌های آینه‌راهی به من بجو!

من فکر می‌کنم
هرگز نبوده
به هر تیش قلب من
کنون
بیدارباش قافله‌یی می‌زند جرس.

احساس می‌کنم
در چشم من
به آبش اشک سرخ‌گون
خورشیدی غروب سرودی گشاد نفس!
آمد شبی برهنه‌ام از در
جو روح آب
در سینه‌اش دو ماهی و در دستش آینه
گیسوی عیس او خزه‌بو، چون خزه به هم.

احساس می‌کنم
در هر رنگم
من بانگ برکشیدم از آستان یأس:
«آه ای یقین بافته، بازت نمی‌بهم!»

ՆՐԱՆՔ ԳՈՅՆԵՐԸ ԶԵՆ ԶԱՆԱԶԱՆՈՒՄ

Ըստ վիճակագրության դաշտոնի զանգվածով (գունագարություն) հիմնականում տղամարդիկ են տառապում: Ո՞րն է պատճառը: Գենետիկները վստահեցնում են, որ տեսողական այդ շեղումները պայմանավորված են սպեկտրի (տարրապատկերի) կարմիր մասի ընկալման համար պատասխանատու գենի արատով: Այդ գենը գտնվում է X քրոմոսոմում եւ արտադրում է պիգմենտ, որը զգայուն է սպեկտրի հենց այդ մասի հանդեպ: Ինչպես յայտնի է՝ կանայք ունեն երկու X քրոմոսոմ, իսկ տղամարդիկ՝ մեկ X, մեկ Y: Այդ պատճառով էլ կանայք կարող են ի ծնե գունային շեղումներ ունենալ, եթե նրանց երկու քրոմոսոմներում էլ թերի գեներ յայտնվեն, ինչը շատ հազվադեպ է պատահում: Իսկ միայն մեկ քրոմոսոմի թերութիւնը բնականաբար աւելի տարածւած երեւոյթ է, այդ պատճառով էլ տղամարդիկ աւելի յաճախ են տառապում տեսողութեան այդ խանգարումով:

Երբ կանայք տարբերում են բոսորագոյնը, մորեգոյնը եւ ալ կարմիրի միւս երանգները, տղամարդկանց աչքին դրանք նոյն կարմիրն են երեւում:

Այնպէս որ չվիրաւորւեք, եթե «Սիրելիս, քեզ դո՞ւր է գալիս իմ վարդագոյն զգեստը» հարցին ի պատասխան լւեք. «Քեզ շատ են սազում կարմրաւուն երանգները»: Դա միտումնաւոր չէ: Բացի դրանից՝ տղամարդկանց հանդէպ այդ հարցում պէտք է ներողամիտ լինել նաեւ նրա համար, որ հենց կանանց պատճառով են տղամարդիկ դալտոնիկ ծնւում. չէ՞ որ X քրոմոսոմը որդուն փոխանցում է հենց մայրը, եւ եթե նա թերի գենի գաղտնի կրող է՝ որդին կը ծնւի

գունային տեսողութեան խանգարումներով:

Դալտոնիկներ ոչ միայն ծնւում են, այլեւ դառնում: Գունային ընկալումները կորցնել հնարաւոր է զանգոսկրի եւ ուղեղի վնասածքի, ծանր հարբուխի, կաթածի կամ ինֆարկտի հետեւանքով: Դալտոնիկները շատ են ալբինոսների շրջանում: Դա բացատրւում է աչքերի ցանցաթաղանթում մեկանիւն պիգմենտի անբաւարար քանակութեամբ: Գունային ընկալման ժամանակաւոր կորուստ հնարաւոր է նաեւ ինքնաթիռում, նաւի վրայ կամ ատոմէքենայում ուժգին տատանումների ժամանակ, ինչպէս նաեւ ընդհանուր կամ էլ տեսողական գերլարածութիւնից:


Ցանկացած դէպքում գունաընկալման բնածին խանգարումը հիւանդութիւն չի համարւում: Գոյների վատ զանազանումը տեսողութեան սրութեան վրայ ոչ մի կերպ չի անդրադառնում: Մարդը կարող է նոյնիսկ չենթադրել, որ որոշակի խնդիրներ ունի եւ այդ մասին պատահաբար իմանալ: Օրինակ անգլիացի Ջոն Դալտոնը, ով չէր զանազանում կարմիր գոյնը, մինչեւ 26 տարեկանը չգիտէր այդ մասին: Բանն այն է, որ դալտոնիկները մանկուց լսում եւ մտապահում են, որ խոտը կանաչ է, երկինքը՝ կապոյտ, արիւնը՝ կարմիր եւ գոյներն սկսում են անլանել ըստ այդ ընդունւած անւանումների: Պարզւում է, որ դալտոնիկները կարող են աստիճանաբար սովորել գոյները զանազանել ըստ վառութեան աստիճանի՝ դրանով մասամբ փոխհատուցելով իրենց տեսողական թերութիւնը: Ընդ որում դա այնքան յաջող են անում՝ միայն մասնագէտը կա-

րող է իսկութիւնը կռահել:

Այնպէս որ գունային բաւարար տեսողութեան բացակայութիւնը ողբերգութիւն չէ, այդ շեղումն առողջութեան վրայ չի անդրադառնում: Չէ՞ որ եթէ ինչ-որ մէկն ասենք երաժշտական լսողութիւն չունի, ապա միակ բանը, որից նա կեանքում կը զրկւի՝ կոնսերւատորիայում սովորելն է եւ երաժիշտի կարիերան: Գունային ընկալումների խանգարումներով տառապող մարդիկ լաւ են տեսնում, բայց մի փոքր այլ կերպ, քան միւսները: Նրանք կարող են չվախենալ տեսողութեան վատացումից: Դալտոնիկների մեծ մասը կարողանում են յարմարել եւ ապրել առանց մեծ բարդութիւնների:

Բայց ոմանց համար՝ օրինակ օդաչուների, գունային լաւ ընկալումը պարտադիր է, եւ ովքեր յաւակնում են ստանալ այդ մասնագիտութիւնը, պէտք է մասնագիտական ամբողջական հետազօտութիւն անցնեն՝ ներառեալ գունային տեսողութիւնը: Քիմիկոսի եւ էլեկտրիկի մասնագիտութիւնները նոյնպէս խորհուրդ չեն տրւում դալտոնիկներին՝ էլեկտրական լարերի կամ քիմիական ռեակտիւների գոյները շփոթելը կարող է վտանգաւոր լինել նրանց կեանքի համար: Տեսողութեան թերութիւն ունեցողների համար խնդրայարոյց են նաեւ նկարչի, բուսաբանի, բժշկի մասնագիտութիւնները:

Բայց գունային խառնաշփոթից ամենաշատը վարորդներն են տուժում: Մինչեւ վերջերս համարւում էր, որ չի կարելի դալտոնիկ լինել եւ մեքենայ վարել: Հիմա այդ օրէնքները վերանայել են: Յատուկ հրամանի համաձայն՝



այլեւս գոյութիւն չունեն մեքենայ վարելու սահմանափակումներ՝ գոյների մի մասը չզանազանող մարդկանց համար: Բացառութիւն են այն դէպքերը, երբ մեքենայի դեկին նստած մարդը տառապում է գունային լիակատար կուրութեամբ կամ եթէ նրա աշխատանքն առնչւում է ուղեւորափոխադրումների կամ էլ արժէքաւոր իրերի փոխադրումների հետ:

Դալտոնիկների ամենամեծ տոկոսն արձանագրւել է Չեխիայում եւ Սլովակիայում: Գիտնականներն այդպէս էլ չկարողացան հասկանալ այդ երեւոյթի պատճառը. այնպէս, ինչպէս առայսօր չեն կարողանում բացատրել նաեւ մէկ այլ երեւոյթ, թէ ինչու Ֆիջիի կղզիներում ու բրազիլական հնդկացիների շրջանում դալտոնիկներ գրեթէ չկան:

Իսկ ահա խաղաղօվկիանոսեան փոքրիկ Պինգելլապ կղզում իւրաքանչիւր 20-րդ բնակիչը բացարձակ դալտոնիկ է (համեմատութեան համար ասենք, որ աշխարհում դալտոնիզմի միջին տարածւածութիւնը 50 հազար մարդու հաշւով 1 դէպք է): Դա բացատրւում է նրանով, որ 1775 թ. փոթորկի ժամանակ կղզում ընդամենը 20 մարդ էր ողջ մնացել: Եւ դժբախտ պատահականութեամբ՝ նրանցից մէկը դալտոնիզմի գենի կրող է եղել: Դէնց նա էլ այդ գենը փոխանցել է սերունդներին, ովքեր այս կամ այն չափով արիւնակցական կապեր են ունեցել:


Պինգելապցիներն ընդհանրա-

պէս ոչ մի գոյն չեն զանազանում: Բացի դրանից՝ նրանց աչքերն ունակ չեն «սուր տեսողութեան», որն անհրաժեշտ է ընթերցանութեան կամ այլ մանրակրկիտ աշխատանքի համար, շատ զգայուն են արեւի վառ լոյսի հանդէպ: Ցերեկները նրանք ձգտում են շէնքերում լինել՝ կիսաստուերում, քանի որ դրսում նրանք պարզապէս ոչինչ չեն տեսնում: Նրանց մեծա-


մասնութեան համար միակ մասշտաբի աշխատանքը գիշերային ձկնորսութիւնն է:

Ծանր վարակիչ հիւանդութիւնից յետոյ ռուսական բնապատկերի հայր Սաւրասովը եւս կեանքի վերջին տարիներին գոյները չէր տարբերում՝ իր վերջին ստեղծագործութիւնները նա յիշողութեամբ է նկարել: Դալտոնիկ է եղել նաեւ Վռութելը: Նման եզրակացութեան են եկել գիտնականները՝ վերլուծելով նրա նկարները, որոնցում գերակշռում են մոխրամարգարտագոյն երանգները: Մեծ նկարիչը տառապում էր կարմիր ու կանաչ գոյների ընկալման բացակայութեամբ:


Աղբիւր՝ ԶՐՈՒՑԱԿԻՑ



Normal



Protanope




Deuteranope



Tritanope


ԻՆՉ Է ՉԳՈՂԱԿԱՆ ՈՒՇԸ

Արման Տ. Ստեփանեան



Բոլոր մարդիկ ապրում են երկիր մոլորակի վրայ: Նրանք ամեն օր քնից զարթնում, ապա մեկնում են աշխատանքի, դրանից յետոյ վերդառնում են տուն եւ հանգստանում՝ պատրաստելով յաջորդ օրւայ իրենց գործերին: Սակայն դրանց մէջ շատ քիչ են նրանք, ովքեր երբեւիցէ մտածում են այն մասին թէ ինչն է պատճառը, որ իրենք կանգնած երկրագնդի վրայ: Այն, որ երկիր մոլորակը հարթ ու տափարակ չէ, այլ՝ կլոր, դարեր է, ինչ բոլորի կողմից ընդունւած փաստ է դարձել: Սակայն այն, որ ինչն է պատճառը, որ մենք եւ ինչպէս նաեւ բնութեան մէջ գտնուող բոլոր էակները ոնց որ ամրացւած լինենք

$$F = \frac{G m_1 m_2}{r^2}$$



Այսաք Նիւտոն, անգլիացի մաթեմատիկոս-ֆիզիկոս 17-18-րդ դդ. առաջինը նա ձեւաւորեց ձգողութեան օրէնքը, երկիր մոլորակի ձգողականութեան ուժի տեսութիւնը:



Ջեյմզ Մաքսուել, շոտլանդացի գիտնական 19-րդ դար. նա միաւորեց էլեկտրական եւ մագնիսական ուժերը, եւ ապացուցեց, թէ լոյսը էլեկտրամագնիսական ալիք է:



Ալբերտ Էյնշտէյնը 20-րդ դարի սկզբներում Շւէյցարիայում առաջ քաշեց Ժամանակի եւ տարածութեան յարաբերականութեան տեսութիւնը եւ հիմնադրեց յարաբերական ֆիզիկան:

գետնին, դա դեռ շատ հին ժամանակներից մարդուն հետաքրքրող հարցերից մէկն է եղել: Սակայն այս հարցին առաջին անգամ գիտական մօտեցում ցուցաբերեց մի քանի դար առաջ: 1687 թւականին անգլիացի մաթեմատիկոս Այսաք Նիւտոնը հրատարակեց մի գիրք Principia անունով: Գրքում նա առաջին անգամ ինչ որ մաթեմատիկական ֆորմուլաներով բացատրեց տարբեր մարմինների շարժումները: Այդ գրքում նաեւ նրան յաջողեց ինչ-որ կերպ բացատրել այն հետաքրքիր եւ խորհրդաւոր ուժի մասին, որը երկրագնդի վրայի բոլոր էակներին ու առարկաներին պահում է իր վրայ: Այս յայտնաբերութիւնը ունի մի հետաքրքիր առասպել: Ասում են թէ մի օր, երբ Նիւտոնը խնձորի ծառի տակ նստած վայելում էր իր օրը, մի խնձոր, պոկւելով ծառից, ընկաւ նրա գլխին: Դա ոչ միայն այսօր այլեւ՝ բոլոր ժամանակներում տեղի ունեցող մի հասարակ երեւոյթ է, սակայն

Նիւտոնի եւ բոլոր աշխարհի գիտութեան համար այն վերածեց ինչ-որ շրջադարձային կէտի: Ծառից պոկւած եւ գետին ընկած խնձորը տաղանդաւոր մաթեմատիկոսին մտածելու առիթ տւեց: Ինչո՞ւ խնձորը վայր ընկաւ: Ինչո՞ւ պոկւելուց յետոյ այն օտար ուղղութիւններով չզնաց,- Նիւտոնը հարցրեց իրենից: Հէնց այս երկու հարցի պատասխանը նրան հասցրեց ձգողական ուժի յայտնագործմանը: Նիւտոնին յաջողեց այս երեւոյթը այսպէս մեկնաբանել, թէ երկիր մոլորակը իր շրջապատում առկայ մասսա ունեցող բոլոր մարմինների վրայ ազդում եւ նրանց ձգում է դէպի իր կողմը: Նա այս ուժը անւանեց ձգողական ուժ: Այսպիսով նրան յաջողեց բացատրել թէ ինչու երկրագնդի վրայ ամէն ինչ ամրացւած է գետնի վրայ: Սակայն Նիւտոնի յայտնագործութիւնը դրանով չսահմանափակեց: Դրանից առաջ աստղագետներին յաջողել էր փաստել թէ երկրագունդը եւ այլ մոլորակները բոլորը

պտոյտ են կատարում Արեգակի շուրջ: Նիւտոնը մի յանդուգն քայլ արեց, ասելով թէ՛ այն ուժը, որը խնձորին ստիպում է գետին ընկնել եւ Գետնին ստիպում է պտոյտ կատարել Արեգակի շուրջ դրանք երկուսն էլ երկու տարբեր դրսեւորումներն են մէկ ընդհանուր երեւոյթից՝ ձգողական ուժից: Ըստ նրա ձգողականութիւնը այն ուժն է, որը երկու մասսա ունեցող գոյացութիւններ ցուցաբերում են իրար հանդէպ: Ինչքան երկու իրերի տարածութիւնը աւելի է փոքրանում, այնքան աւելի է մեծանում ձգողականութեան ուժը: Այսպիսով Նիւտոնն առաջին մարդն էր, ում յաջողեց բացատրել ձգողականութիւնը, ու նաեւ իրար միացնել երկու տարբեր իրականութիւններ մէկ անւան տակ:


Մինչեւ 19-րդ դարի վերջերը, Նիւտոնեան հիմնւած օրէնքները իշխում էին որպէս այն ժամանակւայ ֆիզիկայի բացարձակ օրէնքներ: Նիւտոնեան օրէնքների վրայ հիմնւած ֆիզիկական կարողացել էր

բացատրել այն ժամանակակա աշխարհի գրեթե բոլոր երեւոյթները: Այն ժամանակ արդէն բոլոր մարդկանց եւ ինչպէս նաեւ ֆիզիկոսներին թուում էր թէ մարդուն յաջողել է բացատրել տիեզերքի բոլոր երեւոյթները: Այդ ժամանակներում ֆիզիկան համարուում էր գիտութիւն, որը սկսում է Նիւտոնի հիմնած շարժման օրէնքներից իսկ վերջանում է լոյսին եւ էլեկտրիկային վերաբերող տեսութիւններով: Սակայն 19-րդ դարի վերջին 30 տարւայ ընթացքում, գիտութեան առաւել զարգանալով, արձանագրուեց նոր եւ շատ զարմանալի փաստեր: Այս երեւոյթների սկիզբը կարելի է համարել էլեկտրական եւ մագնիսական ուժերի միաւորումը: Տասնեակ տարիներ ֆիզիկոսները փորձում էին հասկանալ թէ ինչ կապ ունեն այն ժամանակակա հենց նիւտոնեան ֆիզիկայի վրայ հիմնւած էլեկտրական եւ մագնիսական տեսութիւնները իրար հետ: Սակայն գիտնականների բոլոր ջանքերը, շոտլանդացի գիտնական Ջեյմս Մակսուելը խտացրեց 4 մաթեմատիկական ֆորմուլաների մէջ: Փաստելով, որ գոյութիւն չունեն էլեկտրականութիւնը եւ մագնիսականութիւնը որպէս երկու տարբեր երեւոյթներ, այլ՝ նրանք երկու տարբեր դրսեւորումներ են մէկ երեւոյթից, որը կոչւում է էլեկտրամագնիսականութիւն: Ապա նա փաստեց, թէ լոյսը էլեկտրամագնիսական ալիք է: Սա եւս համարուեց որպէս ֆիզիկայի մէջ մեծ յեղափոխութիւն:

